21.03.24 - 21.03.24
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ 8-րդ մասնաշենք

Ս.թ. մարտի 21-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ 8-րդ մասնաշենքում
կանցկացվի «Հոգեթերապիայի հոգեսոմատիկ խանգարումների խնդիրը. դուալիզմից
մինչև ամբողջական մոտեցում և գեշտալտ թերապևտիկ հեռանկարները» վերտառությամբ սեմինար։

Ընդհանուր հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվող սեմինարի շրջանակում հոգեբանական գիտությունների թեկնածու, Մոսկվայի գեշտալտ թերապիայի և խորհրդատվության ինստիտուտի ռեկտոր, Գեշտալտ թերապիայի եվրոպական ասոցիացիայի անդամ, ռուսալեզու գեշտալտ ինստիտուտների ասոցիացիայի նախագահ Օլեգ Նեմիրինսկին կներկայացնի գեշտալտ թերապիայի պաթոլոգիայի ընդհանուր գաղափարը, հոգեսոմատիկ խանգարումների գեշտալտ թերապիայի երկու հիմնական ռազմավարությունները, թերապիայի գծային և դիալեկտիկական մոդելները և այլ թեմաներ։

Սեմինարին մասնակցելու են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի և մագիստրատուրայի ուսանողները։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am